

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՀԱԿՈՔՅԱՆ ԱՆԻ ՎԱՆԵՐԻԻ

**ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ
ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Վ. Թորգոմյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ի. Կ. Կարապետյան
	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռ. Յ. Խաչատրյան
Առաջատար կազմակերպություն՝	Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. դեկտեմբերի 5-ին՝ ժամը 14⁰⁰-ին, ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. նոյեմբերի 4-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Ա. Փ. Ղազարյան

ԱՅԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Ժամանակակից աշխարհում հասարակության արժեհամակարգում իրականացող փոփոխություններն ուղեկցվում են երիտասարդ սերնդի արժեքային պատկերացումներում ընթացող էական տեղաշարժերով: Համապատասխանաբար կրթության բնագավառում արդիական է դառնում այնպիսի անձի ձևավորման հիմնախնդիրը, ով ունակ է համարժեք գործելու բազմաձևակության միջավայրում, ներդաշնակորեն համադրելու ազգային և համամարդկային մարդասիրական արժեքները: Հասարակության արժեքային գերակայությունների հարափոփոխ գարգացման արդի պայմաններում շեշտադրվում է ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդիրը, որի լուծման արդյունավետությունը պայմանավորված է կրթության բովանդակության մեջ ճանաչողական, արժեքանական, սոցիալ-մշակութային և տեխնոլոգիական բաղադրատարրերի համադրման ուղիների որոնմամբ:

Կրթության արժեկենտրոն հարացույցի ձևավորումն ընդլայնում է հասարակության միջմշակութային հաղորդակցման սահմանները՝ արժևորելով լեզվական կրթության դերը: Այս համատեքստում ի հայտ է գալիս լեզվական կրթության արդիականացման, այդ գործընթացում արժեքանական մոտեցումների որոշակիացման և նորագույն տեխնոլոգիաների յուրացման անհրաժեշտություն՝ օտարալեզու տեղեկատվության մեջ կողմնորոշվելու և միջմշակութային հաղորդակցման ընդլայնման համար: Ժամանակի հրամայականն է ուղղորդել դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորումը՝ ժամանակակից հարափոփոխ աշխարհում ապրելու, արժեքային տեղաշարժերի հորձանուտում կողմնորոշվելու, գլոբալացման արդի գործընթացներում էթնոմշակութային արժեքների գիտակցման հիման վրա համամարդկային արժեքները յուրացնելու համար:

Հասարակության արժեհամակարգի և անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման, այդ գործընթացի հոգեբանամանկավարժական օրինաչափությունների, մանկավարժական արժեքանության, բազմաձևակության աշխարհում մշակույթների երկխոսության, կրթության բովանդակության նկատմամբ արժեքային մոտեցման, լեզվի արժեքային ներուժի, միջմշակութային հաղորդակցման հիմնահարցերն ուսումնասիրվել են փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, լեզվամշակութաբանական գրականության մեջ (Ն. Ա. Աստաշովա, Ն. Ա. Բերոյան, Ե. Վ. Բոնդարևսկայա, Բ. Ս. Գերշունսկի, Ի. Ա. Իլյին, Ն. Բ. Կոնյովա, Մ. Ս. Կազան, Կ. Յասպերս, Ն. Ս. Ռոզով, Դ. Ա. Լեոնտև, Ս. Լ. Ռուբինշտեյն, Վ. Ա. Սլաստյոնին, Ս. Գ. Տեր-Մինասովա, Լ. Վ. Թորգոմյան, Ռ. Յ. Խաչատրյան, Ի. Կ. Կարապետյան, Ռ. Ա. Մարդոյան և այլք):

Այնուհանդերձ, չնայած անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման տեսության և պրակտիկայի մեջ ակնհայտ նվաճումներին և հետազոտություններին, տակավին խորությամբ հետազոտված չեն կրթական գործընթացում ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գիտատեսական հիմքերը, ուսումնական դասընթացների արժեկողմնորոշիչ հնարավորությունները:

Անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդիրն նվիրված տեսական հետազոտությունների վերլուծությունը, հիմնախնդրի լուծման ոլորտում որոնումները բացահայտեցին մի շարք հակասություններ կայուն արժեքահամակարգ ունեցող անձի ձևավորման նկատմամբ հասարակության պահանջի և ավագ դպրոցում այդ գործընթացի՝ սոցիալ-մշակութային նոր իրավիճակին համարժեք իրականացման բովանդակային ու տեխնոլոգիական կողմերի ոչ բավականաչափ մշակվածության միջև:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է տեխնոլոգիական հեղաշրջումների, գլոբալացման գործընթացների ու միջմշակութային երկխոսության արդի պայմաններում ավագ դպրոցի կրթության բովանդակության արժեկողմնորոշիչ ներուժի իմաստավորման և սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման գիտամեթոդական ապահովման անհրաժեշտությամբ:

Հետազոտության նպատակը

Հետազոտության նպատակն է բացահայտել, տեսականորեն և գործնականում հիմնավորել ուսուցման գործընթացում ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման ուղիները:

Հետազոտության օբյեկտը

Հետազոտության օբյեկտը ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացն է:

Հետազոտության առարկան

Հետազոտության առարկան ուսուցման գործընթացում ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման ուղիներն են:

Հետազոտության վարկածը

Հետազոտության վարկածն այն է, որ ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացն արդյունավետ կիրականանա, եթե՝

1. Արժեքանական առանցքային հասկացությունների վերլուծության հիման վրա մեկնաբանվեն և բնութագրվեն այն արժեքները, որոնք պետք է ձևավորվեն ուսուցման գործընթացում՝ հաշվի առնելով ուսումնասիրվող դասընթացների արժեկողմնորոշիչ հնարավորությունները:

2. Առաջադրվեն և հիմնավորվեն ուսուցման գործընթացում ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման ուղիները:

3. Բացահայտվեն անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի գիտատեսական հիմքերը, հիմնավորվեն այդ գործընթացի արդյունավետության մանկավարժական պայմանները:

4. Մշակվի և ուսուցման գործընթացում ներդրվի ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական մոդելը, սահմանվեն արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի փուլերը, բովանդակային բաղադրատարրերը, արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակարդակները բնութագրող չափանիշները:

5. Ուսուցման գործընթացում կիրառվեն արժեկողմնորոշիչ արդյունավետ մեթոդներ, միջոցներ ու ձևեր, տեսականորեն և գործնականում հիմնավորվի Web 2.0 որոշ գործիքների արժեկողմնորոշիչ նպատակներով կիրառումը:

Հետազոտության խնդիրները

Հետազոտության նպատակն իրականացնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, լեզվամշակութաբանական գրականության և հայեցակարգերի վերլուծության հիման վրա մեկնաբանել արժեքանական հիմնական հասկացությունները, արդիականության տեսանկյունից նորովի բնութագրել ու դասակարգել արժեքներն ու արժեխմբերը:

2. Վերլուծել ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման հայեցակարգային գաղափարները, նախանշել այդ գործընթացի արդյունավետ իրականացման ուղիները:

3. Մշակել հարցաթերթիկներ և ստացված տվյալների հիման վրա վերլուծել ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորվածության առկա վիճակը, սահմանել մակարդակները, դրանք բնութագրող չափանիշները, արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բաղադրատարրերը, իրականացման սկզբունքները:

4. Մշակել, տեսականորեն և գործնականում հիմնավորել ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական մոդելը՝ հիմնված ուսումնական դասընթացների արժեքային ներուժի վրա:

5. Հիմնավորել ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման արդյունավետ մեթոդների, միջոցների, ձևերի ընտրությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը

Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմել են արժեքանական հիմնական հասկացությունների սահմանման վերաբերյալ փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական տեսությունները, արժեքանական, մշակութաբանական, անձնակենտրոն մոտեցումներն ու հայեցակարգերը, կոմպետենցիաների վրա հիմնված կրթության հիմնադրույթները, կրթության մարդասիրացման գաղափարները (Ն. Ա. Աստաշովա, Լ. Ա. Բայկովա, Ե. Վ. Բոնդարևսկայա, Զ. Բուրկե, Ի. Յա. Զիննյայա, Ա. Օ. Թոփուզյան, Վ. Ի. Իլյին, Ն. Բ. Կռիլովա, Ա. Մալոու, Ի. Ս. Յակիմանսկայա, Զ. Ռավեն, Ն. Ս. Ռոզով, Կ. Ռոջերս, Ա. Հ. Սարգսյան, Վ. Ա. Սլաստյոնին և այլք), պատանեկան կենսափուլում անձի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններին, ուսումնաձանաչողական գործունեության ընթացքում քննադատական մտածողության զարգացմանը նվիրված հայեցակարգերը (Բ. Գ. Անան, Լ. Ի. Բոժովիչ, Դ. Դ. Դավիդով, Օ. Վ. Խուխլանա, Ի. Ս. Կոն, Դ. Հալպերն, Ա. Վ. Պետրովսկի, Ա. Ա. Ռեան և այլք), տեղեկատվական և հեռահաղորդակցական որոշ տեխնոլոգիաների՝ արժեկողմնորոշիչ նպատակներով կիրառման վերաբերյալ մեթոդաբանական մոտեցումներն ու հայեցակարգային դրույթները (Բ. Դոջ, Թ. Մարչ, Դ. Մեյթսոն, Հ. Շեթցեր, Ե. Ս. Պոլատ, Մ. Վարշաուեր, Փ. Ֆորդ և այլք), լեզվի, մասնավորապես օտար լեզուների միջոցով ազգային և համամարդկային արժեքների տիրապետման, բազմալեզվության, միջմշակութային երկխոսության վերաբերյալ լեզվամշակութաբանական տեսությունները (Հ. Աբե, Վ. Ս. Բիբլեր, Գ. Դայսլեր, Մ. Դեյթսման, Բ. Մ. Եսաջանյան, Վ. Վ. Զինչենկո, Բ. Կուժարավադիվելու, Մ. Հայդ, Վ. Ա. Մալովա, Գ. Նոյներ, Պ. Վ. Սիսոև, Ռ. Վայզման, Ե. Ֆ. Տարասով, Ա. Գ. Տեր-Մինասովա և այլք):

Հետազոտության մեթոդները

Հետազոտության ընթացքում կիրառվել են տեսական և էմպիրիկ մեթոդներ՝ հետազոտության հիմնախնդրին նվիրված փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, լեզվամշակութաբանական, մասնագիտական գրականության, կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերի, կրթության ոլորտը կանոնակարգող իրավանորմատիվային փաստաթղթերի վերլուծություն, դիտում, գրույց, անկետավորում, հարցազրույց, մոդելավորում, սոցիալական ընթացքում ստացված տվյալների քանակական և որակական վերլուծություն:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, լեզվամշակութաբանական տեսությունների հիման վրա վերլուծվել և մեկնաբանվել են արժեքա-նական հիմնական հասկացությունները, նորովի են բնութագրվել ու դասակարգվել արժեքներն ու արժեխմբերը:

2. Հիմնավորվել են ուսումնաձանաչողական գործընթացում ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման ուղիները և այդ գործընթացի արդյունավետության մանկավարժական պայմանները:

3. Բացահայտվել են ուսումնական գործընթացում ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակային և տեխնոլոգիական կողմերը, մշակվել է այդ գործընթացի մանկավարժական մոդելը:

4. Ներկայացվել են ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման առավել արդյունավետ մեթոդները, միջոցներն ու ձևերը, բնութագրվել են Web 2.0 որոշ գործիքների, մասնավորապես WebQuest-ի և բլոգների՝ արժեկողմնորոշիչ նպատակներով կիրառման սկզբունքներն ու մոտեցումները:

Հետազոտության տեսական նշանակությունը.

1. Հետազոտության հիմնախնդրի տեսական վերլուծության արդյունքում բացահայտվել են ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման հայեցակարգային գաղափարները:

2. Վերլուծվել և տեսականորեն հիմնավորվել է ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բովանդակությունը, բնութագրվել են այդ գործընթացի ձանաչողական-տեղեկատվական, հուզական-գնահատողական, գործունային բաղադրատարրերը:

3. Տեսականորեն հիմնավորվել է տեղեկատվական-հաղորդակցական կրթական միջավայրում արդյունավետ մեթոդների, միջոցների ու ձևերի, այդ թվում Web 2.0 որոշ գործիքների՝ արժեկողմնորոշիչ նպատակներով կիրառման հնարավորությունը:

Հետազոտության գործնական նշանակությունը.

1. Մշակված տեսական դրույթները, գործնական հետազոտության նյութերը, տեղեկատվական և հեռահաղորդակցական որոշ տեխնոլոգիաների արժեկողմնորոշիչ կիրառման վերաբերյալ հանձնարարականները կարող են օգտակար լինել ուսումնական տարբեր առարկաների ուսումնասիրման գործընթացում:

2. Մշակված ախտորոշիչ-գնահատողական գործիքակազմը կարելի է հաջողությամբ ներդնել ոչ միայն ուսումնաձանաչողական գործընթացում, այլև

սոցիալ-մշակութային տարբեր իրազեկությունների չափման, վերլուծության և գնահատման նպատակով:

3. Տեսական և գործնական հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ուսուցիչների վերապատրաստման ծրագրային-բովանդակային ապահովման գործընթացում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորումն արդյունավետ է իրականանում նպատակաուղղված, համակարգված մանկավարժական ներգործության պայմաններում՝ ըստ ավագ դպրոցի ուսումնական նպատակների, և արտահայտվում է աշխարհի արժեքային-գնահատողական ընկալմամբ, անձնային ինքնորոշման, միջանձնային փոխազդեցության և միջմշակութային երկխոսության կայուն դրդապատճառների ձևավորվածությամբ:

2. Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման ուղիներն են՝

- այդ գործընթացի մանկավարժական մոդելի մշակումը,
- կրթության բովանդակության նկատմամբ արժեքային մոտեցման արդիականացումը,
- արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում արժեքանական, անձնակենտրոն, մշակութաբանական մոտեցումների, կոմպետենցիաների վրա հիմնված կրթության հիմնադրույթների և մարդասիրական կրթության գաղափարների իրականացումը,
- արժեքային կողմնորոշումների ձևավորման համար մանկավարժական համապատասխան պայմանների ապահովումը,
- այդ գործընթացի բովանդակային և տեխնոլոգիական կողմերի համապատասխանեցումը, շարունակական ախտորոշումն ու մշտադիտարկումը:

3. Արժեքային կողմնորոշումների ձևավորման արդյունավետության մանկավարժական պայմաններն են ուսումնաձանաչողական գործընթացի ակտիվացման և ավագ դպրոցականների քննադատական մտածողության զարգացման համար տեղեկատվական ու տեխնոլոգիական անհրաժեշտ ռեսուրսների ապահովումը, նրանց տարիքային առանձնահատկությունների հաշվառումը, ուսումնական դասընթացների արժեքային ուղղվածության ընդգծումը, ինտեգրվող թեմատիկ միավորների ստեղծումը, արդյունավետ մեթոդների, միջոցների, ձևերի ընտրությունը և մանկավարժական փոխներգործության ձևերի կիրառումը:

4. Ուսումնաձանաչողական գործընթացում ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական մոդելի ներդրման արդյունավետությունն ապահովվում է կրթական ծրագրերի արժեկողմնորոշիչ բովանդակության շեշտադրմամբ, սովորողների ինքնուրույն աշխատանքի համար տեղեկատվական աղբյուրների մատչելիության ապահովմամբ և վիրտուալ կրթական տարածքում հաղորդակցման համար հոգեբանամանկավարժական, սոցիալական, կազմակերպական աջակցությամբ:

5. Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի ձանաչողական-տեղեկատվական, հուզական-գնահատողական,

գործունային բաղադրատարրերը ձևավորվում են տեղեկատվական-հաղորդակցական միջավայրում ինտեգրվող առարկաների բովանդակային հնարավորությունների հիման վրա:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված են հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմող տեսությունների, հայեցակարգային դրույթների համալիր վերլուծությամբ, հետազոտության արդի մեթոդների կիրառմամբ, փորձարարական հետազոտության տևական բնույթով, հարցումների ընթացքում ստացված տվյալների որակական ու քանակական համալիր վերլուծությամբ, մեկնաբանմամբ ու իմաստավորմամբ:

Հետազոտության կատարման փուլերը

Հետազոտությունն իրականացել է երեք փուլով:

Առաջին փուլում (2011-2012 թ.թ.) ուսումնասիրվել է հետազոտության հիմնախնդրին նվիրված գրականությունը, ձևակերպվել են հետազոտության թեման, սահմանվել են նպատակը, վարկածը, խնդիրները, ընտրվել է հետազոտության տեսական-մեթոդաբանական բազան, ճշգրտվել են հետազոտության հիմնական ուղղությունները:

Երկրորդ փուլում (2012-2013թ.թ.) ձևավորվել են փորձարարական հետազոտության խմբերը, մշակվել են հարցաթերթիկները, անցկացվել են սոցիալոգիաները, վերլուծվել, մշակվել են ստացված տվյալները, նախանշվել են աշխատանքի հետագա ուղղությունները, մշակվել է ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական մոդելը:

Երրորդ փուլում (2013-2014թ.թ.) գործնականում կիրառվել են առաջարկված մեթոդները, միջոցներն ու ձևերը, վերլուծվել, համակարգվել են ամփոփիչ տվյալները, առաջադրվել են հետազոտության հիմնական դրույթները, արվել են եզրակացություններ:

Հետազոտության փորձաքննությունը կատարվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության տեսության և պատմության ամբիոնում, ատենախոսության թեմայով հրատարակված գիտական հոդվածներում: Հետազոտության թեմայի վերաբերյալ զեկուցումներ են կարդացվել մի շարք գիտաժողովներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը ներկայացված է 156 էջ ծավալով: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, 142 սկզբնաղբյուր պարունակող օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից:

ԱՄԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածությունում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը, խնդիրները, մատնանշվել են հետազոտության գիտական նորույթը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության մեթոդաբանական հիմքը, մեթոդները, հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը, հետազոտության կատարման փուլերը, արդյունքներն ու եզրակացությունները, ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության՝ **«Անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման գիտատեսական հիմքերը»** խորագրով առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ **«Արժեքանական հիմնական հասկացությունների փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական մեկնաբանումը»** ենթագլխում փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական տեսանկյուններից ներկայացվել են հետազոտության հիմնախնդրի առանցքային հասկացությունները՝ «արժեքանություն», «արժեք», «արժեքային կողմնորոշումներ», «իդեալ», «նորմ»: Արժեքներին նվիրված ուսմունքը՝ արժեքանությունը, միտված է հարափոփոխ աշխարհում արժեքներին վերաբերող փիլիսոփայական հարցադրումների պատասխանների որոնմանը: Մարդն ապրում է բազմազան աշխարհում, որը նրան մղում է իր կեցության նկատմամբ որոշակի գնահատողական վերաբերմունք ձևավորելու, իմաստավորելու իր տեղն ու դերն այդ աշխարհում, արժևորելու շրջապատող առարկաները, երևույթներն ու գործընթացներն ըստ հոգևոր և նյութական պահանջմունքների բավարարման: Չնայած պատմամշակութային յուրաքանչյուր ժամանակաշրջան իր կնիքն է դնում աշխարհի նկատմամբ մարդու արժեքային-գնահատողական վերաբերմունքի վրա, այնուհանդերձ գոյություն ունեն համամարդկային անանց արժեքներ, որոնք, որպես համընդհանուր նորմեր, չափանիշներ, կարգավորում են համայն մարդկության նյութական և հոգևոր գործունեությունը: Հասարակության արժեհամակարգի ազդեցությամբ մարդու մեջ ձևավորվում են աշխարհայացքային, բարոյական դիրքորոշումներ, վարքի որոշակի դրսևորումներ, որոնք ըմբռնվում են որպես արժեքային կողմնորոշումներ: Կայուն արժեքային կողմնորոշումներն ամրագրվում են անձի արժեհամակարգում՝ դառնալով նպատակ, իդեալ, կենսածն, սկզբունք և համոզմունք: Արժեքային կողմնորոշումները կազմում են աշխարհաձանաչողության հիմքը, ուղղորդում և ակտիվացնում են մարդու գործունեությունը, միավորում են ձանաչողական, դրդապատճառային, հուզական ոլորտները՝ ձևավորելով հոգևոր հասունության մակարդակները: Ներկայացվել և վերլուծվել են անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման փուլերի, առանձնահատկությունների և կառուցվածքային ենթահամակարգերի վերաբերյալ հեղինակային հայեցակարգեր:

«Արժեքների դասակարգման վերաբերյալ մոտեցումների վերլուծությունը» խորագրով երկրորդ ենթագլխում հիմնավորվել է, որ արդի ժամանակաշրջանում համամոլորակային էկոլոգիական, տնտեսական, քաղաքական ճգնաժամը,

տեղեկատվական հասարակության զարգացումները, միջնակության հաղորդակցման ընդլայնման միտումները, գլոբալացման գործընթացներն ու քաղաքակրթության զարգացման հեռանկարները թելադրում են հասարակության արժեհամակարգում արժեքների նորովի ընկալման և վերաիմաստավորման անհրաժեշտություն: Ընդհանրացվել, ամփոփվել են արժեքների՝ ըստ տարբեր հիմունքների դասակարգման վերաբերյալ առկա տեսակետներն ու մոտեցումները և դրանց հիման վրա արդիականության տեսանկյունից նորովի են ներկայացվել քաղաքական, էկոլոգիական, գլոբալացման, այդ համատեքստում՝ տեղեկատվական հասարակության և միջնակության հաղորդակցման, տեխնոլոգիայի և տեխնոհումանիտար, հասարակական, համամարդկային, անհատական, կրթական, ազգային արժեքներն ու արժեքմբերը:

Երրորդ՝ «Լեզվամշակության գործունե անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում» ենթագլխում հետազոտության հիմնախնդրի շրջանակներում արժեքների քննությունը որոշակիացվել է լեզվամշակութաբանական տեսանկյունից՝ շեշտադրելով լեզվի արժեկողմնորոշիչ գործառույթները: Լեզուն իմացության ու շրջակա աշխարհի յուրացման միջոց է և որպես աշխարհի արտացոլման առարկայական իրողություն՝ դրսևորվում է որոշակի իմաստային արժեքների ձևով: Մարդու գնահատողական գործունեությունը և ըստ այդմ վարքային դրսևորումներն իրականանում են լեզվի արժեքային-իմաստային բովանդակությանը համապատասխան: Մարդը, լինելով տվյալ լեզվի կրողը, վերաիմաստավորում է իրականությունը՝ ստեղծելով աշխարհի արժեքային պատկերը: Միջազգային փաստաթղթերի վկայակոչմամբ ներկայացվել են գլոբալացման արդի ժամանակաշրջանում լեզվակրթական քաղաքականության հիմնական խնդիրները՝ բազմալեզվության նոր հայեցակարգը դիտարկելով տարբեր մշակույթների ու արժեքային ըմբռումների պայմաններում համակեցության արդի կողմնորոշումների շրջանակներում: Հիմնավորվել է, որ հասարակության զարգացման արդի փուլում հաղորդակցման նոր ձևերի ի հայտ գալն առաջին պլան է մղում լեզվական կրթության դերը և բոլոր անհրաժեշտ պայմանները ստեղծում վիրտուալ հաղորդակցման համար, որը պայմանավորում է լեզվի ուսուցման գործընթացում ճանաչողական, հաղորդակցական և արժեկողմնորոշիչ գործառույթների մեթոդաբանական հիմնավորման անհրաժեշտությունը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդիրը»** խորագրով գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին՝ **«Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման հայեցակարգային գաղափարները»** ենթագլխում ներկայացվել և հետազոտության հիմնախնդրի տեսանկյունից հիմնավորվել են կրթության նկատմամբ արժեքանական, մշակութաբանական, անձնակենտրոն մոտեցման, կոմպետենցիաների վրա հիմնված կրթության հիմնադրույթներն ու մարդասիրական կրթության առանցքային գաղափարները, որոնք առաջնային են ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում: Արժեքանական մոտեցումը հիմնված է փոխակերպվող հասարակության զարգացումների կանխատեսման հայեցակարգի վրա: Ըստ այս մոտեցման՝ կրթության արժեքային հարացույցի հիմքում պետք է

ընկած լինեն կենսական այն արժեքների ընկալումն ու իմաստավորումը, որոնք ամրագրված են հասարակության բարոյական պատկերացումներում և արտացոլվում են միջներնդային փոխազդեցության ու դաստիարակչական հարաբերություններում: Կրթության նկատմամբ արժեքանական մոտեցման մեջ առանձնացվել են միջմշակութային հաղորդակցման, հանրամշակութային իրազեկության ձևավորման, կրթության բովանդակության նկատմամբ արժեքային վերաբերմունքի շեշտադրման, կրթական գործընթացում սուբյեկտ-սուբյեկտ հարաբերությունների ձևավորման սկզբունքները:

Անձնակենտրոն մոտեցումը ենթադրում է կրթական գործընթացում սովորողի անհատականության, տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների, պահանջմունքների, հետաքրքրությունների, ընդունակությունների հաշվառում: Անձնակենտրոն մոտեցումն ապահովում է հաղորդակցման, համագործակցության միջավայրը՝ հիմնված ազատության, փոխըմբռնման, հանդուրժողականության վրա, որում հիմնական արժեքներն են սովորողի անձը, ազատությունը, ստեղծագործությունը:

Ըստ մշակութաբանական մոտեցման՝ կրթական գործընթացը պետք է կողմնորոշված լինի սոցիալ-մշակութային միջավայրում անձի ինքնագարգացմանը, մարդու և մշակույթի՝ արժեքային ուղղվածությամբ երկխոսությանը, բազմադարյան հոգևոր մշակույթի պահպանմանն ու վերարտադրմանը:

Կոմպետենցիաների վրա հիմնված կրթության հիմնադրույթներում շեշտադրվում է առանցքային կոմպետենցիաների ձևավորումը՝ որպես կրթական գործընթացի վերջնարդյունք: Ներկայացվել են եվրոպական մի շարք կառույցների կողմից սահմանված և հեղինակային հայեցակարգերում բնութագրված կոմպետենցիաները, որոնց ձևավորումը դիտարկվում է որպես կրթության նպատակ՝ ներառելով ճանաչողական-տեղեկատվական, արժեքային, սոցիալ-մշակութային, տեխնոլոգիական և այլ բաղադրիչներ:

Մարդասիրական կրթության հիմնական նպատակն անձի ինքնիրացումն է, աշխարհում իր տեղի գիտակցումը, կենսուղու ընտրությունը, աշխարհաճանաչողությունը, արժեքային ինքնորոշումը: Մարդասիրական կրթության շրջանակներում է իմաստավորվում հասարակության հոգեմտավոր գերակայությունների, աշխարհի արժեքային ընկալման և կրթության արժեկողմնորոշիչ բովանդակության միջև փոխադարձ կապը:

Երկրորդ՝ **«Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական պայմանները»** ենթագլխում բնութագրվել են արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմանները՝ ուսումնաճանաչողական գործընթացի ակտիվացման և ավագ դպրոցականների քննադատական մտածողության զարգացման համար տեղեկատվական ու տեխնոլոգիական անհրաժեշտ ռեսուրսների ապահովումը, նրանց տարիքային առանձնահատկությունների հաշվառումը, ուսումնական դասընթացների արժեքային ուղղվածության ընդգծումը, ինտեգրվող թեմատիկ միավորների ստեղծումը, արդյունավետ մեթոդների, միջոցների, ձևերի ընտրությունը և մանկավարժական փոխներգործության ձկուն ձևերի կիրառումը: Կարևոր պայման են նաև հաղորդակցական միջավայրի ձևավորումը, սովորողների ինքնուրույն

աշխատանքի համար տեղեկատվական աղբյուրների մատչելիության ապահովումը և վիրտուալ կրթական տարածքում հաղորդակցման համար դասավանդողների հոգեբանամանկավարժական, սոցիալական, կազմակերպական աջակցությունը:

Հիմնավորվել է, որ ուսումնաձանաչողական գործընթացի ակտիվացման պայմաններում իրական նախադրյալներ են ստեղծվում ոչ միայն ուսումնական խնդիրների լուծման, այլև աշխարհի նկատմամբ հուզական-արժեքային վերաբերմունքի, յուրացված գիտելիքների հիման վրա իրականության արտացոլման ու ստեղծագործաբար վերարտադրման, աշխարհում իր տեղի ու դերի իմաստավորման ու արժևորման, քննադատական մտածողության զարգացման համար: Դա ռեֆլեքսիվ մտածողություն է, որը նպաստում է ըստ իրավիճակների հիմնավորված որոշումների ընդունմանը, ձևավորում է տեղեկատվությունը գնահատելու և ստեղծագործաբար կիրառելու կարողություններ՝ արժեքային, վերլուծական-գնահատողական վերաբերմունքի հիման վրա:

Արժեքային կողմնորոշումների ձևավորման տեսանկյունից հանգամանալից վերլուծվել են պատանեկան կենսափուլի առանձնահատկությունները: Ավագ դպրոցական տարիքում աշխարհի նկատմամբ վերլուծական հայացքը խորացնում է ինքնաձանաչողությունը, հարստացնում է հուզական ապրումների ոլորտը և արժեքային-գնահատողական վերաբերմունքը, ուստի դասավանդվող առարկաների բովանդակությունը, կիրառվող մեթոդները, միջոցները, ձևերը պետք է ուղղված լինեն ոչ միայն ուսումնական նյութի ընկալմանը, այլև աշխարհի արժեքային ձանաչողությանը:

Ավագ դպրոցում կրթության բովանդակության արժեկողմնորոշիչ հնարավորությունների վերլուծությունը մասնավորվել է անգլերենի դասընթացի օրինակով, որին նվիրված է երրորդ՝ **«Ավագ դպրոցում անգլերենի կրթության բովանդակության արժեկողմնորոշիչ հնարավորությունների վերլուծությունը»** ենթագլուխը: Օտար լեզվի ընտրությունը հիմնավորված է մի շարք պատճառներով. դասընթացի թեմաները խորապես առնչվում են հարակից առարկաներին, և ինտեգրվող թեմատիկ միավորների ստեղծման հնարավորությունները մեծ են: Կարևոր պատճառ է նաև այն, որ գլոբալ համացանցը՝ հիմնականում օտարալեզու տեղեկատվությամբ, ավելի ու ավելի մեծ չափերով է ներգործում երիտասարդ սերնդի արժեքային պատկերացումների վրա, ուստի տիրապետելով օտար լեզուների, միջմշակութային հաղորդակցման կարողությունների և ունենալով արժեքային հստակ կողմնորոշումներ՝ ավելի հեշտ է սոցիալ-մշակութային փոխազդեցության ընթացքում դիմակայել տեղեկատվական հոսքի ներգործությանը:

Հիմնավորվել է, որ օտար լեզվի կրթության բովանդակության մեջ անհրաժեշտ է խորապես հաշվի առնել արժեքային գործոնը, այսինքն՝ զուգորդել լեզվի տիրապետման ձանաչողական, տեղեկատվական, իմացական, լեզվամշակութաբանական, սոցիալ-մշակութային և էթնոհոգեբանական տեսանկյունները, արժեքային վերաբերմունք ձևավորել օտարալեզու տեղեկատվության յուրացման և գնահատման ուղղությամբ, ուսումնասիրվող լեզվի միջոցով ուղղորդել աշխարհի արժեքային-գնահատողական ընկալումը, ձևավորել վարքի սոցիալ-մշակութային նորմեր միջմշակութային հաղորդակցման պայմաններում: Նշված

կոմպետենցիաները ձևավորվում են մի քանի մակարդակում՝ իմացական-ճանաչողական, հուզաարժեքային, վարքային, դրդապատճառային-գնահատողական: Հիմնավորվել է, որ օտար լեզվի ուսուցման գործընթացում արժեքային ուղղվածության շեշտադրումը ենթադրում է, որ ոչ միայն պետք է իրագործվի լեզվի ուսուցման գլխավոր նպատակը՝ հաղորդակցական իրազեկության ձևավորումը՝ իր հիմնական բաղադրիչներով, այլև ժամանակակից տեղեկատվական հասարակության անդամի ձևավորումը՝ իր արժեքային աշխարհագրագողությամբ:

Չորրորդ՝ **«Ուսումնաճանաչողական գործընթացում ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական մոդելը»** ենթազխում բնութագրվել են մոդելի բաղադրիչները՝ այդ գործընթացի բովանդակային բաղադրատարրերը, նպատակը, իրականացման սկզբունքները, փուլերը, գործոնները, արդյունավետ մեթոդներն ու միջոցները, ուսումնաճանաչողական գործընթացի սուբյեկտների փոխգործակցության ձևերը, արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակարդակները բնութագրող չափանիշները, ելակետային և մանկավարժական ներգործության արդյունքում ձևավորված մակարդակների ախտորոշման միջոցները, արդյունքները և դրանց քանակական ու որակական վերլուծությունը: Սահմանվել են ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բովանդակությունը կազմող ճանաչողական-տեղեկատվական, հուզական-գնահատողական և գործունային բաղադրատարրերը, մշակվել են արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակարդակները բնութագրող չափանիշները և կարողությունների համախումբը: Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացն իրականանում է ըստ հանրամշակութային իրազեկության զարգացման, բազմաձևակութայնության, հաղորդակցման, հանդուրժողականության, տեղեկատվական ռեսուրսների մատչելիության ապահովման, առարկայական չափորոշիչներով նախատեսված իրազեկությունների համատեքստում ինտեգրվող առարկաների հնարավորությունների հաշվառման, սովորողների ինքնուրույնության ապահովման, մասնագիտական կողմնորոշումների ձևավորման սկզբունքների: Սուբյեկտների փոխգործակցության ձևերն են դասարանային և արտադասարանային անհատական ու խմբային աշխատանքները, ինչպես նաև վիրտուալ հաղորդակցման արդյունավետ համադրումը:

Ատենախոսության երրորդ՝ **«Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գիտամեթոդական ապահովումը և փորձարարական հիմնավորումը»** խորագրով գլուխը բաղկացած է չորս ենթազխից: Առաջին՝ **«Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների առկա վիճակի վերլուծությունը»** ենթազխուխը նվիրված է փորձարարական հետազոտության հաստատող փուլին, որի նպատակն է նախնական տվյալներ ստանալ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորվածության առկա վիճակի վերաբերյալ: Հետազոտության բազան են հանդիսացել Երևան քաղաքի Ավ. Իսահակյանի անվան թիվ 16, Բենիամին Ժամկոչյանի անվան թիվ 119, Ա. Ղարիբյանի անվան թիվ 142, Գ. Էմինի անվան թիվ 182, Աբովյան քաղաքի Խ. Աբովյանի անվան թիվ 1, թիվ 4, Արարատի մարզի Ոսկետափի ավագ

դպրոցները: Հետազոտությանը մասնակցել են ընդհանուր, բնագիտամաթեմատիկական և հումանիտար հոսքերի 320 աշակերտներ: Մշակվել են հարցաթերթիկներ՝ սոցիալական ցանցերի իրականացնելու համար: «Դպրոցականների կողմից արժեքային կողմնորոշումների ձևավորվածության կարևորումը», «Դպրոցականների վերաբերմունքն ուսումնական թեմաների արժեքային ներուժի վերաբերյալ», «Տեղեկատվական և հեռահաղորդակցական որոշ տեխնոլոգիաների՝ արժեկողմնորոշիչ նպատակներով կիրառման հնարավորությունների գնահատումը», «Արժեկողմնորոշիչ ներգործության միջոցների վերաբերյալ սովորողների վերաբերմունքը», «Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործոնները», «Ազգային և համամարդկային մշակութային արժեքների տիրապետումը» վերնագրերով հարցաթերթիկներում ընդգրկված հարցերին տրված պատասխանները բավականաչափ տեղեկատվություն են պարունակում դպրոցականների արժեքային կողմնորոշումների վերաբերյալ պատկերացում կազմելու համար: Ստացված տվյալների վերլուծությամբ բացահայտվեց, որ ստուգիչ խմբերում (ՍԽ) հարցվածների միայն 22%-ը և փորձարարական խմբերում (ՓԽ) 26%-ն է արժեքային կողմնորոշումների ձևավորվածությունը կարևորում ժամանակակից աշխարհում ապրելու և այլ մշակութայինների հետ շփվելու համար: Անգլերենի դասընթացի տեքստերում բավականաչափ արժեքային ներուժ է գնահատում երկու խմբերում հարցվածների մինչև 31%-ը: Երկու խմբերում էլ հարցվածների քիչ մասն է նշում, որ S<S-ները կիրառում է ուսումնական նպատակներով: Սոցիալացումները բացահայտեցին, որ Web 2.0 որոշ գործիքներ, մասնավորապես WebQuest-ը, որը կարելի է կիրառել կրթական նպատակներով, հետազոտության բազա հանդիսացած դպրոցների ուսումնական գործընթացում գրեթե չի կիրառվում: «Արժեկողմնորոշիչ ներգործության միջոցների վերաբերյալ սովորողների վերաբերմունքը» խորագրով հարցաթերթիկի վերլուծությունը բացահայտում է, որ ընդհանուր առմամբ 19%-ից ոչ ավելի հարցվածներին է ուսումնական նյութերում հետաքրքրում արժեքային ուղղվածությունը, ընդամին արժեքային բովանդակության ընկալման համար հիմնականում կողմնորոշիչ գործառնություններ է իրականացնում ուսուցիչը: Ուսումնական նյութի արժեքային բովանդակության ընկալման համար արժեկողմնորոշիչ մեթոդների, միջոցների, ձևերի անհրաժեշտությունը կարևորում է ՍԽ-ում հարցվածների միայն 24%-ը, ՓԽ-ում 34%-ը: Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործոնների վերաբերյալ հարցումներից պարզ է դառնում, որ փորձարարական հետազոտության երկու խմբերում էլ հարցվածների մեծամասնության արժեքային կողմնորոշումների վրա զգալի ներգործություն ունեն զանգվածային մշակույթը և տեղեկատվական աղբյուրները, մինչդեռ ՍԽ-ում ընդամենը 21% և ՓԽ-ում 22% հարցվածների համար կողմնորոշիչ գործոն են տվյալ առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը և դասավանդողի նպատակաուղղված ներգործությունը: Սոցիալացումների ամփոփիչ արդյունքները համապատասխան աղյուսակներով և գծապատկերներով, ներկայացված են աշխատանքում: Յուրաքանչյուր հարցաթերթիկի տվյալները վերլուծվել և մշակվել են Microsoft Excel համակարգչային ծրագրի միջոցով: Ի մի բերելով բոլոր հարցումների տվյալները՝ ստացվել են ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների

ծևավորվածության բարձր, միջին և ցածր մակարդակները փորձարարական հետազոտության հաստատող փուլում (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակարդակները փորձարարական հետազոտության հաստատող փուլում

ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ	ՍԽ (%)	ՓԽ (%)
ԲԱՐՁՐ	21	25
ՄԻՋԻՆ	45	44
ՑԱԾՐ	34	31

Արդյունքների վերլուծությունից ակնհայտ է, որ թե՛ ստուգիչ և թե՛ փորձարարական խմբերում գերակշռում են արժեքային կողմնորոշումների ձևավորվածության միջին և ցածր մակարդակները: Դա հավաստում է, որ անհրաժեշտ է առանձնահատուկ շեշտադրել ուսումնական նյութերի արժեքային կողմը, նախանշել ուղիներ սովորողների մեջ ուսումնական նյութի արժեքային ընկալման համարժեք դրդապատճառներ ձևավորելու համար, առաջարկել մանկավարժական ներգործության արդյունավետ միջոցներ:

Երկրորդ՝ «Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման արդյունավետ մեթոդները, միջոցներն ու ձևերը» ենթազբառում ներկայացվել են մանկավարժական ներգործության այն միջոցները, որոնք ուղղված են ուսումնական նյութի տեղեկատվական և ճանաչողական նշանակության բացահայտմանը, արժեքային բովանդակության ընկալմանը, դպրոցականների քննադատական և ստեղծագործական մտածողության, գնահատողական կարողությունների զարգացմանը, տեղեկատվական-հաղորդակցական միջավայրի ձևավորմանը, արդիականության գլոբալ հիմնախնդիրների նկատմամբ հետաքրքրության արթնացմանը:

Սովորողների ամբողջական մտածողության ձևավորման համատեքստում կարևոր է առարկաների, երևույթների տրամաբանական, հուզական-պատկերավոր, ստեղծագործական գործընթացների ամբողջական ընկալումը, որի համար նպատակահարմար է ուսուցման գործընթացում կիրառել ինտեգրատիվ առաջադրանքներ: Մշակվել են դատողական-տրամաբանական, իմացական-ճանաչողական, հուզական-պատկերավոր, արժեկողմնորոշիչ-գնահատողական և ստեղծագործական առաջադրանքների նմուշօրինակներ՝ արժեկողմնորոշիչ ընդգծված շեշտադրումներ ունեցող հիմնախնդիրների նկատմամբ դպրոցականների մեջ հուզական-արժեքային վերաբերմունք ձևավորելու համար: Ըստ Բ. Բլումի ուսուցման տաքսոնոմիայի ներգործական խմբի մակարդակների ընկալում, պատասխան, գնահատում, կազմակերպում, արժեքի բնութագրում, մշակվել է տեքստի շուրջ արժեկողմնորոշիչ աշխատանքի նմուշ: Առաջարկված տնային ընթերցանության իրականացումը՝ նախաընթերցանական, լեզվական-վերլուծական, բովանդակային-վերլուծական, ստեղծագործական-գնահատողական, վերահսկողության-գնահատման փուլերի հաջորդականությամբ,

արժեկողմնորոշիչ լայն հնարավորություններ ունի: Արժեկողմնորոշիչ ներուժ ունեն նաև համագործակցային ուսուցման մեթոդները, ուսումնասիտագոտական նախագծերը, քննարկումները, բանավեճերը, իրավիճակի վերլուծությունը, դեպքի ուսումնասիրումը, թրենինգը, դերախաղը, որոնք հանգամանալից բնութագրվել են աշխատանքում:

Երրորդ՝ **«Տեղեկատվական և հեռահաղորդակցական որոշ տեխնոլոգիաների արժեկողմնորոշիչ կիրառման հիմնավորումը»** ենթագլխում հոգեբանամանկավարժական, սոցիալական, կազմակերպական տեսանկյուններից բնութագրվել են այն վեբ տեխնոլոգիաները, որոնք հնարավոր է կիրառել արժեկողմնորոշիչ նպատակներով: Տեղեկատվական-հաղորդակցական կրթական միջավայրի ապահովման համատեքստում ուսումնասիրվել են մասնավորապես WebQuest-երի և բլոգների արժեկողմնորոշիչ հնարավորությունները, հիմնավորվել է տեղեկատվական տեխնոլոգիաների հարաձուլն ներդրման արդի պայմաններում ուսումնաձանաչողական գործընթացում դրանց կիրառման նպատակահարմարությունը: Բնութագրվել են տեղեկատվական-հաղորդակցական կրթական միջավայրի բաղադրատարրերը և դասավանդողի գործառույթներին ներկայացվող արդի պահանջները: Ներկայացվել են WebQuest-ի կառուցվածքը և արժեքային ուղղվածություն ունեցող թեմայի շուրջ աշխատանքի նմուշօրինակ WebQuest-ի կիրառմամբ: Դիտարկվել են բլոգների արժեկողմնորոշիչ հնարավորությունները՝ որպես անձնակենտրոն կրթական միջավայրի ստեղծման միջոց:

Չորրորդ՝ **«Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորմանն ուղղված աշխատանքների իրականացումը և ամփոփիչ հարցումների արդյունքները»** ենթագլուխը նվիրված է առաջարկված արդյունավետ մեթոդների, միջոցների, ձևերի վերլուծությանը, գործնականում կիրառմանը և հիմնավորմանը: Գլոբալացման արդի գործընթացներում քաղաքական, սոցիալ-մշակութային, կրթական, էկոլոգիական հիմնախնդիրների նկատմամբ արժեքային վերաբերմունք ձևավորելու համար լայնորեն օգտագործվել են ինտեգրվող առարկաների հնարավորությունները: Բնութագրվել են գործնականում կիրառված մեթոդները, միջոցներն ու ձևերը՝ քննարկում-բանավեճը, խմբային և ինքնուրույն ուսումնասիտագոտական նախագծերը, թրենինգը, համագործակցային խմբային աշխատանքները, դերախաղը, տնային ընթերցանությունը, WebQuest-ի կիրառումը, որոնք առավել արդյունավետ են սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում:

Կիրառված մանկավարժական ներգործության արդյունավետության մեջ հավաստիանալու նպատակով ստուգիչ և փորձարարական խմբերում դարձյալ անցկացվել են սոցիալացումներ՝ ստացված տվյալները փորձարարական հետազոտության առաջին փուլում ստացված արդյունքների հետ համեմատելու համար: Այս փուլում որոշակի փոփոխություններ են արձանագրվել փորձարարական խմբերում հարցվածների պատասխաններում: Արժեքային կողմնորոշումների ձևավորվածությունը կարևորում է հարցվածների 51%-ը, այն դեպքում, երբ նախորդ հարցմանը ստացվել էր 26% արդյունք: Ուսումնական գործընթացում WebQuest տեխնոլոգիայի կիրառման ցանկություն է

արտահայտել հարցվածների 51%-ը՝ նախորդ հարցման 14%-ի համեմատ: Ուսումնական նյութի արժեքային բովանդակության ընկալման համար հատուկ ընտրված արդյունավետ մեթոդների, միջոցների ու ձևերի դերը կարևորում է հարցվածների 71%-ը՝ նախկինում արտահայտված 34%-ի փոխարեն: Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործում օտար լեզվի տիրապետման անհրաժեշտությունը գիտակցում է հարցվածների 61%-ը, այն դեպքում, երբ հաստատող փուլում ստացվել էր 35% արդյունք: Տվյալների ամփոփիչ վերլուծությամբ ստացվել են ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորվածության բարձր, միջին և ցածր մակարդակները բնութագրող թվային ցուցանիշները (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակարդակները փորձարարական հետազոտության վերջում

ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ	ՍԽ (%)	ՓԽ (%)
ԲԱՐՁՐ	26	56
ՄԻՋԻՆ	48	30
ՑԱԾՐ	26	14

Հարցումների արդյունքները վկայում են, որ փորձարարական խմբերում էականորեն փոխվել են հարցվածների պատկերացումներն արժեքային կողմնորոշումների ձևավորվածության կարևորության, ուսումնաճանաչողական գործընթացում տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների արժեկողմնորոշիչ նպատակներով կիրառման, գլոբալացման արդի ժամանակաշրջանում միջմշակութային երկխոսության համար անհրաժեշտ հանրամշակութային իրազեկությունների տիրապետման, ուսումնական դասընթացների արժեքային ներուժի շեշտադրման, արժեքային կողմնորոշումների ձևավորման գործոնների և մանկավարժական նպատակաուղղված ներգործության վերաբերյալ:


Փորձարարական հետազոտության ընթացքում կիրառված մանկավարժական ներգործության արդյունավետությունը հավաստող տվյալներն արտացոլված են համապատասխան աղյուսակում և գծապատկերում (Աղյուսակ 3, գծապատկեր 1):

Աղյուսակ 3

Արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակարդակների տարբերությունը փորձարարական հետազոտության սկզբում և վերջում

ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ	ՍՏՈՒԳԻՉ ԽՄԲԵՐ(%)			ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՄԲԵՐ(%)		
	սկիզբ	վերջ	տարբ.	սկիզբ	վերջ	տարբ.
ԲԱՐՁՐ	21	26	+5	25	56	+31
ՄԻՋԻՆ	45	48	+3	44	30	-14
ՑԱԾՐ	34	26	-8	31	14	-17

Գծապատկեր 1



Հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ իրականացված սոցիալոգիաների արդյունքների վերլուծությունը փաստում է կիրառված մանկավարժական ներգործության արդյունավետությունը և հիմնավորում այն, որ ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորումն արդյունավետ է իրականանում մանկավարժական նպատակաուղղված և համակարգված գործընթացի արդյունքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրությամբ հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, լեզվամշակութաբանական գրականության վերլուծությունը բացահայտում է, որ անձի արժեքային կողմնորոշումների ձևավորումը նպատակաուղղված, համակարգված գործընթաց է, որն իրականանում է ամբողջ կյանքի ընթացքում, սակայն այդ գործընթացն առանձնահատուկ կարևորվում է ավագ դպրոցական տարիքում: Այս կենսափուլում են ձևավորվում անձի մասնագիտական կողմնորոշումները, կայունանում են հայացքներն ու համոզմունքները, ակտիվանում են ճանաչողական գործընթացները, զարգանում են քննադատական, տրամաբանական մտածողությունը, ձևավորվում է աշխարհի նկատմամբ արժեքային-զնահատողական վերաբերմունքը:

2. Հետազոտության ընթացքում բնութագրվել և դասակարգվել են քաղաքական, էկոլոգիական, գլոբալացման, այդ համատեքստում՝ տեղեկատվական հասարակության և միջմշակութային հաղորդակցման, լեզվամշակութային, տեխնոլոգիայի և տեխնոհումանիտար, հասարակական, անհատական, կրթական, ազգային և համամարդկային արժեքները, որոնցում բնութագրված

արժեքները հիմնականում ձևավորվում են ուսումնաձանաչողական գործընթացում:

3. Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման մեր կողմից առաջադրված և հիմնավորված ուղիները համապատասխանում են ավագ դպրոցի ընդհանուր և տարբերակված հոսքերի ուսումնական նպատակներին:

4. Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի արդյունավետության մանկավարժական պայմաններն են ուսումնաձանաչողական գործընթացի ակտիվացման և ավագ դպրոցականների քննադատական մտածողության զարգացման համար տեղեկատվական ու տեխնոլոգիական անհրաժեշտ ռեսուրսների ապահովումը, նրանց տարիքային առանձնահատկությունների հաշվառումը, ուսումնական դասընթացների արժեքային ուղղվածության ընդգծումը, ինտեգրվող թեմատիկ միավորների ստեղծումը, արդյունավետ մեթոդների, միջոցների, ձևերի ընտրությունը և մանկավարժական փոխներգործության ձևերի կիրառումը: Կարևոր պայման են նաև սովորողների ինքնուրույն աշխատանքի համար տեղեկատվական աղբյուրների մատչելիության ապահովումը և վիրտուալ կրթական տարածքում հաղորդակցման համար դասավանդողների հոգեբանամանկավարժական, սոցիալական, կազմակերպական աջակցությունը:

5. Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական մոդելը ներառում է այդ գործընթացի նպատակը, բովանդակությունը՝ ձանաչողական-տեղեկատվական, հուզական-գնահատողական և գործունային բաղադրատարրերով, իրականացման սկզբունքները, փուլերը, գործոնները, արժեկողմնորոշիչ մեթոդներն ու միջոցները, սուբյեկտների փոխգործակցության ձևերը, արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակարդակները բնութագրող չափանիշները, ելակետային և մանկավարժական ներգործության արդյունքում ձևավորված մակարդակների այստորոշման միջոցները, արդյունքները և դրանց քանակական ու որակական վերլուծությունը:

6. Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում արժեկողմնորոշիչ մեթոդների, միջոցների, ձևերի ընտրությունն իրականանում է ինտեգրվող առարկաների բովանդակային հնարավորությունների հիման վրա՝ ավանդական ուսումնական միջավայրը նպատակաուղղված համադրելով վիրտուալ կրթական տարածքի հետ:

7. Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացն արդյունավետ է իրականանում տեղեկատվական-հաղորդակցական միջավայրում սուբյեկտ-սուբյեկտ փոխգործակցության ապահովմամբ, ուսումնական և արտաուսումնական գործունեության ընթացքում անհատական ու խմբային աշխատանքի ձևերի զուգակցմամբ:

8. Հետազոտության արդյունքները հավաստում են Web 2.0 որոշ գործիքների, մասնավորապես WebQuest-ի և բլոգների արժեկողմնորոշիչ հնարավորությունների կիրառման արդյունավետությունն ուսումնաձանաչողական գործընթացում՝ տեղեկատվական ռեսուրսների մատչելիության, հասանելիության, դասավանդողների կողմից մանկավարժահոգեբանական և կազմակերպական համապատասխան աջակցության ապահովմամբ:

9. Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորումը մեծ չափով պայմանավորված է դասավանդող ուսուցիչների մասնագիտական կոմպետենտությամբ, հանրամշակութային բարձր պատրաստվածությամբ, հաղորդակցման որակներով, պլանավորման, կանխատեսման, կազմակերպական, խորհրդատվական, վերահսկողական և այլ գործառույթների տիրապետմամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հակոբյան Ա. Վ., Ուսումնաձանաչողական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման դիդակտիկական հիմնավորումը, «Մանկավարժական միտք» հանդես, 2012(1-2), էջ 136-145:

2. Հակոբյան Ա. Վ., Անձի ձանաչողական գործունեության փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական մեկնաբանումը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2012(3), էջ 22-29:

3. Հակոբյան Ա. Վ., Լեզվամշակութային գործոնը ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում, «Կրթությունը և գիտությունը Արցախում» գիտամեթոդական գիտահանրամատչելի պարբերական, 2012(3-4), էջ 29-35:

4. Հակոբյան Ա. Վ., Արժեկողմնորոշիչ տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններն ավագ դպրոցում անգլերենի ուսուցման գործընթացում, «Մանկավարժական միտք» հանդես, 2012, (3-4), էջ 119-126:

5. Հակոբյան Ա. Վ., Տնային ընթերցանության արժեկողմնորոշիչ դերը ավագ դպրոցի անգլերենի ուսուցման գործընթացում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, -Եր.: «Մանկավարժ» հր., 2013, էջ 268-271:

ПУТИ ФОРМИРОВАНИЯ ЦЕННОСТНЫХ ОРИЕНТАЦИЙ СТАРШИХ ШКОЛЬНИКОВ

Диссертация на соискание степени кандидата педагогических наук по специальности 13. 00. 01. “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 5-го декабря 2014 года в 14⁰⁰ на заседании действующего в ЕГУ 065 специализированного совета по педагогике при ВАК. Адрес: 0025, г. Ереван, улица Абовяня 52а, корпус факультета армянской филологии ЕГУ, 203 аудитория.

РЕЗЮМЕ

Актуальность темы. Изменения, происходящие в системе ценностных ориентаций общества на современном этапе, сопровождаются также важными изменениями в ценностных представлениях молодого поколения. В системе образования становится актуальным необходимость формирования такой личности, кто смог бы адекватно действовать в поликультурной среде, гармонично сопоставлять национальные и общечеловеческие ценности. В условиях развития меняющихся ценностных приоритет общества подчёркивается проблема формирования ценностных ориентаций старших школьников, эффективность решения которой обусловлено поиском путей сопоставления познавательных, социально-культурных и технологических компонентов в содержании образования.

В настоящее время расширяются границы межкультурной коммуникации общества, что подчеркивает роль языкового образования. Становится необходимым актуализация содержания языкового образования и в этом процессе четкое определение аксиологических подходов и применение ценностно ориентирующих возможностей новейших информационных и телекоммуникационных технологий.

Актуальность темы обусловлена необходимостью осмысления ценностно-ориентирующего потенциала содержания образования старшей школы и научно-методического обеспечения процесса формирования ценностных ориентаций учащихся в условиях технологического развития, глобализационных процессов и межкультурного диалога на современном этапе.

Цель исследования выявить, теоретически и практически обосновать пути формирования ценностных ориентаций старших школьников в учебном процессе.

Задачи исследования:

1. Интерпретировать основные аксиологические понятия на основе анализа философской, психолого-педагогической и лингвокультурологической литературы и концепций, по-новому характеризовать и классифицировать группы ценностей с точки зрения актуальности.

2. Анализировать концептуальные идеи формирования ценностных ориентаций старших школьников, наметить эффективные пути осуществления этого процесса.

3. Разработать анкеты, на основе полученных данных анализировать существующее состояние сформированности ценностных ориентаций старших школьников, определить уровень, характеризующие их критерии, компоненты и принципы процесса формирования ценностных ориентаций.

4. Разработать, теоретически и на практике обосновать педагогическую модель формирования ценностных ориентаций старших школьников, основанную на аксиологический потенциал учебных предметов.

5. Обосновать выбор эффективных методов, форм и средств формирования ценностных ориентаций старших школьников.

Научная новизна исследования.

1. На основе философских, психолого-педагогических и лингвокультурологических теорий анализированы и интерпретированы основные аксиологические понятия, по-новому характеризованы и классифицированы группы ценностей.

2. Обоснованы пути формирования ценностных ориентаций старших школьников в учебно-познавательном процессе и педагогические условия эффективности этого процесса.

3. Представлены наиболее эффективные методы, средства и формы формирования ценностных ориентаций старших школьников, характеризованы принципы и подходы применения некоторых информационных и телекоммуникационных технологий, в частности Web 2.0 в ценностно-ориентирующих целях.

4. Раскрыты содержательные и технологические аспекты формирования ценностных ориентаций старших школьников в учебно-познавательном процессе, разработана педагогическая модель этого процесса.

Теоретическая значимость исследования.

1. В результате теоретического анализа проблемы исследования раскрыты концептуальные идеи формирования ценностных ориентаций старших школьников.

2. Анализировано и теоретически обосновано содержание процесса формирования ценностных ориентаций старших школьников, характеризованы познавательно-информационный, эмоционально-оценочный и деятельностный компоненты этого процесса.

3. теоретически обоснованы возможности применения эффективных методов, средств и форм, в том числе Web 2.0 в ценностно-ориентирующих целях в информационно-коммуникативной образовательной среде.

Практическая значимость исследования.

1. Разработанные теоретические положения, материалы практического исследования, методические рекомендации по применению некоторых информационных и телекоммуникационных технологий в ценностно-ориентирующих целях могут быть полезны в процессе изучения разных учебных дисциплин в образовательном процессе.

2. Разработанный диагностическо-оценочный инструментарий можно успешно применять не только в учебно-познавательном процессе, но и с целью измерения, анализа и оценки разных социально-культурных компетенций.

3. Результаты теоретического и практического исследования могут быть применены в процессе программно-содержательного обеспечения переподготовки учителей.

Структура и объём диссертации.

Диссертационная работа изложена на 156 страницах компьютерного текста. Состоит из введения, трёх глав, заключения, списка использованной литературы и приложений.

THE WAYS OF DEVELOPING HIGH SCHOOL STUDENTS' VALUE ORIENTATIONS

Dissertation submitted for obtaining a degree of Candidate of Pedagogical Sciences for the speciality of 13.00.01 - Theory and History of Pedagogy.

The public defence of the dissertation will take place at Yerevan State University at the session of the 065 Board of Pedagogy of the RA Supreme Certifying Commission on December 5, 2014, at 14:00 (Address: Yerevan, 0025, Abovyan str. 52a, Yerevan State University, Faculty of Armenian Philology, Room 203)

S U M M A R Y

The relevance of the dissertation theme. Nowadays changes in the system of values in the modern society are accompanied by significant shifts in the value orientations of the young generation. One of the priorities in the system of education is the development of an individual who can live and work in a multicultural environment and successfully combine national and universal values. An emphasis is put on fostering the development of high school students' value orientations. The efficiency of that process is revealed in searches of ways of combining cognitive, social-cultural and technological components in the content of education.

With expanding borders of cross-cultural communication in the modern society, the role of language education is highly emphasised. There is an increasing need to modernise the content of language education, define axiological approaches in that process and apply the value-orienting potential of modern technologies.

Given the contemporary technological revolution, global processes and intercultural communication, the relevance of the research is conditioned by acknowledging the value-orienting potential of the content of education at high schools and fostering the development of learners' value orientations through scientific and methodological approaches.

The objectives of the research. Reveal and theoretically and practically substantiate the ways of developing high school students' value orientations in the teaching process.

The issues addressed in the research:

1. Interpret the main axiological constructs based on the analysis of philosophical, psychopedagogical and linguo-culturological literature and conceptual frameworks; characterise and classify sets of values anew.

2. Analyse the conceptual framework for the development of high school students' value orientations, pinpoint the ways of efficiently implementing that process.

3. Develop surveys and based on the data analyse the current condition of high school students' value orientations, define their levels, the criteria for characterising them, the components of the process of developing value orientations and the principles of implementing that process.

4. Develop and theoretically and practically substantiate the pedagogical model of high school students' value orientations based on the axiological potential of the classes.

5. Substantiate the choice of efficient methods, means and forms of developing high school students' value orientations.

The scientific novelty of the research:

1. The main axiological concepts have been analysed and defined based on theories in philosophy, psychopedagogy and linguo-culturology; sets of values have been characterised and systematised anew.

2. The ways of developing high school students' value orientations in the learning and cognitive process and the pedagogical conditions of the efficiency of that process have been substantiated.

3. The research presents some of the efficient methods, means and ways of promoting the development of high school students' value orientations; the principles of and approaches to applying some information and communication technologies, particularly Web 2.0 tools, for value-orienting objectives have been examined.

4. The content and technological aspects of developing high school students' value orientations in the learning and cognitive process have been explored; the pedagogical model of that process has been developed.

Theoretical value of the research:

1. The conceptual basis of developing high school students' value orientations has been elaborated based on the theoretical analysis of the main tasks of the research.

2. The content of the process of developing high school students' value orientations has been analysed and theoretically substantiated; the cognitive-informative, emotive-evaluative and practical components of that process have been characterised.

3. The feasibility of applying some efficient methods, means and ways, including Web 2.0 tools, in the educational environment for value-orienting purposes has been substantiated.

The practical value of the research:

1. The formulated theoretical theses, practical research materials and some guidelines for applying some information and communication technologies for value-orienting objectives can be useful for studying different disciplines and in the teaching process.

2. The developed diagnostic-assessment tools can successfully be used not only in the learning-cognitive process, but also for measuring, analysing and assessing social-cultural awareness.

3. The results of the theoretical and practical research and some teaching-learning materials can be used in teacher trainings.

Structure and volume of the work. The dissertation consists of 156 pages. It is comprised of an introduction, three chapters, conclusions, list of references and appendices.